«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«30» մարտի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ԳԲԽ-06/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ի 13.03.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

2015թ. մարտի 13-ին ներկայացրած բողոքով «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ստացել է հրավեր՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով

ընթացակարգին էլեկտրոնային ձևով մասնակցելու համար: Հայտերի ներկայացման վերջնաժամկետն ավարտվել է 2015թ. մարտի 9-ին ժամը 11:00-ին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից թույլ տրված տեխնիկական սխալի պատճառով (ֆինանսական ծրարով երկու տող էր բացվում) հնարավոր չի եղել մասնակցել գնման ընթացակարգին, քանի որ մեկ տողը լրացնելիս համակարգը պահանջում էր երկրորդ տողն էլ լրացնել, իսկ երկու տողը լրացնելիս ընդհանուր գումարը կրկնապատկվում էր, որն էլ իր հերթին չի համապատասխանել էլեկտրոնային ձևով գնումների մասնակցելու համար սահմանված օրինակելի ձևին, որի տեսանյութը տեղադրված է www.gnumner.am կայքում: Արդյունքում խախտվել է գնման գործընթացին միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով մասնակցելու՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված սկզբունքը, իսկ նման ձևով հայտը լրացնելիս կխախտվեր նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, քանի որ հնարավոր չէր վերը նշված գնման ընթացակարգին օրենքով սահմանված կարգով մասնակցել կայքում տեղ գտած սխալի պատճառով:

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարը հրավերում կոնտակտային տվյալներից նշել է միայն էլեկտրոնային փոստի հասցեն: Ընկերությունը 2015թ. մարտի 9-ին ժամը 08:57-ին էլեկտրոնային փոստով նամակ է ուղարկել ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարին և խնդրել է հնարավորինս արագ պատասխանել, սակայն պատասխան չի ստացվել:

Որպես բողոքի իրավական հիմքեր Ընկերությունը նշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 31-րդ հոդվածի 1-ին մասը, 45-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 48-րդ հոդվածի 9-րդ մասերը:

Մասնավորապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում...:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները: Յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 48-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով վերոնշյալ իրավական նորմերով՝ «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ն խնդրել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով հայտարարված ընթացակարգը համարել չեղյալ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 19.03.2015թ. ԴՎԱ/578 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրատեխնիկայի և ռադիոտեխնիկայի գնման նպատակով 25.02.2015թ. www.armeps.am կայքում հրապարակվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը մուտքագրելիս՝ համակարգը բազմիցս խափանվել է և անհրաժեշտություն է առաջացել միևնույն գործողությունը կրկնել մի քանի անգամ, ինչի արդյունքում էլ «ֆինանսական չափորոշիչը» անհասկանալի կերպով համակարգում տեղադրվել է երկու տողով: Սահմանված ժամկետում ընթացակարգին մասնակցելու համար էլեկտրոնային ձևով հայտ են ներկայացրել թվով 12 մասնակիցներ, ընդ որում, բոլոր հայտերը ընդունվել են www.armeps.am համակարգի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի: Խնդրի մասին տեղեկանալուց հետո պարզվել է, որ չնայած երկու տողի առկայությանը՝ մասնակիցները հնարավորություն են ունեցել հայտ ներկայացնելու, ընդ որում, համակարգը հայտերն ընդունել է թե մեկ, թե երկու տողերը լրացնելու դեպքում:

Ինչ վերաբերում է «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ի կողմից պարզաբանում ներկայացնելու հարցմանը, ապա Պատվիրատուն չի պատասխանել դրան, քանի որ հարցումը ներկայացված է եղել Օրենքի 26-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն գտնում է, որ Ընկերության բողոքը չի կարող հիմք հանդիսանալ գնման ընթացակարգը չեղյալ հայտարարելու համար, քանի որ վերջինս փաստացի զրկված չի եղել ընթացակարգին մասնակցելու հնարավորությունից: Բացի այդ, նույն ընթացակարգի շրջանակներում պահպանվել են գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքները, իսկ մրցույթի արդյունքները սահմանված կարգով կհրապարակվեն պաշտոնական տեղեկագրում:

3. ԳԲԽ-06/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի 13.03.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 19.03.2015թ. ԴՎԱ/578 գրությունը և ներկայացված փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.03.2015թ. թիվ 2 արձանագրությունը, հայտնում է հետևյալը.

ԳԲԽ-06/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից էլեկտրատեխնիկայի և ռադիոտեխնիկայի ձեռքբերման նպատակով www.armeps.am կայքում հրապարակվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով «ֆինանսական չափորոշիչը»՝ www.armeps.am կայքում տեղադրվել է երկու տողով:

3. Հրավերով սահմանված ժամկետում Ընթացակարգին մասնակցելու նպատակով էլեկտրոնային ձևով հայտ են ներկայացրել թվով 12 մասնակիցներ՝ «Ավանգարդ», «Էյչ Գրուպ», «ԷԼԿՈՄՊ», «Էրովադ», «Հենրի Ռադիո», «Մագնատես», «ՄԱԺԷՎ», «ՔԼԵՎԵՌ ՀՈՄ», «Տոպազ-95», «Վարբադ» ՍՊ ընկերությունները, «Սատուրն-ԱԿԻԱ» ՓԲԸ-ն և «Տիգրան Սամվելյան Արմենակի» Ա/Ձ-ն:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.03.2015թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ վերը նշված մասնակիցների հայտերը սահմանված կարգով հաստատվել են և ներկայացվել են գնահատման:

5. «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու համար հայտ չի ներկայացրել՝ www.armeps.am կայքում տեղադրված «ֆինանսական չափորոշիչը» երկու տող առկա լինելու պատճառով՝ եզրակացնելով, որ երկու տողը լրացնելու դեպքում գումարը կրկնապատկվում է, ինչի պատճառով Ընկերությունը հայտերի գնահատման

փուլում չի համարվի որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ու հաղթող չի ճանաչվի:

4. ԳԲԽ-06/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի Օրենքի 3-րդ հոդվածի.

- 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից էլեկտրատեխնիկայի և ռադիոտեխնիկայի ձեռքբերման նպատակով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի ուսումնասիրությունից հետևում է, որ ընթացակարգի շրջանակներում չեն խախտվել Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում և 2-րդ մասի 1-ին կետում ամրագրված վերոնշյալ դրույթները, և «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ի համար անհավասար պայմաններ չեն ստեղծվել Պատվիրատուի կողմից կազմակերպված գնման գործընթացին մասնակցելու համար:

Բացի այդ, «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ն եզրակացնելով, որ ֆինանսական ծրարի երկու տողը լրացնելու դեպքում գումարը կրկնապատկվում է, ինչի պատճառով Ընկերությունը հայտերի գնահատման փուլում չի համարվի որպես նվազագույն գնային

առաջարկ ներկայացրած մասնակից ու հաղթող չի ճանաչվի, չի իրացրել գնման գործընթացին մասնակցելու՝ հայտ ներկայացնելու իր իրավունքը:

Նման պայմաններում, քանի որ ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված դրույթները չեն խախտվել, ուստի առաջարկում ենք «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի 13.03.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-06/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան